Անուշ Սաֆարյան
Երևանի պետական համալսարանի Մշակութաբանության ամբիոնի հայցորդ
anushsafaryan1993@gmail.com

ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ*

Հիմնաբառեր. Արցախ, խաչքարային մշակույթ, պատկերագրություն, ինքնության նշան, սահմանային խաչ, Շուշի, Արցախյան պատերազմներ:

Նախաբան

Խաչքարը հայ ազգային ինքնության կարևոր խորհրդանիշներից մեկն է: Խաչքարեր կերտվել են պատմական Հայաստանի ողջ տարածքում, այդ թվում Արցախում և Ուտիքում: Առաջին խաչքարերը երևան են եկել 9-րդ դարում և որոշակի վայրիվերումներով խաչքարակերտումը շարունակվել է մինչև 18-րդ դար: Պայմանավորված նրանով, որ խաչային հորինվածքները տեղափոխվում են տապանաքարի վրա (խաչքարը այլևս թաղման կառույցում բացակայում է), 18-րդ դարից սկսած՝ խաչքարեր գրեթե չեն կանգնեցվում: Միայն 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած՝ վերականգնվեց խաչքարերի տեղադրումը՝ որպես վերգերեզմանային կոթողներ (Պետրոսյան 2008, 373):

Հոդվածում քննարկվում են արցախյան ժամանակակից խաչքարային մշակույթի զարգացումները և փոխակերպումները, խաչքարերի կերտման հիմնական առիթները և դրանց առանձնահատկությունները, Արցախյան առաջին պատերազմի արդյունքում ազատագրված տարածքների խաչքարայնացման գործընթացը և Արցախյան հաջորդ պատերազմներում (Արցախյան Քառօրյա և 44-օրյա պատերազմներ) այդ գործընթացի շարունակությունը:

Անցած դարի 60-ական թվականներին, երբ Հայաստանում սկսվեց խաչքարակերտման նոր փուլը, Արցախում, որը գտնվում էր Ադրբեջանի մշակութահալած քաղաքականության կիզակետում, խաչքարագործությունը մեծ տարածում չգտավ: Ըստ էության, եթե Հայաստանի տարբեր մարզերում խաչքարերի մասին կարելի է խոսել որպես մշակութային լուրջ երևույթի, ապա Արցախում կարելի է խոսել նրա առանձին, անհատական դրսևորումների մասին: Միայն Արցախյան առաջին պատերազմից հետո խաչքարը դարձավ ազատագրված տարածքների, բնակավայրերի և հատկապես սահմանների նշման և սրբազնացման հիմնական սիմվոլը, ներառելով նաև համապատասխան ծավալային և պատկերագրական փոփոխություններ:

Արցախի՝ ժամանակակից փուլի մեզ հայտնի միակ խաչքարագործը Էդիկ Գյուլնազարյանն է, ով 1960-ականներից է սկսել խաչքարագործությամբ զբաղվել:

* Ստացվել է 15. 08. 2022 թ., ուղարկվել է գրախոսման 17. 08. 2022 թ., ընդունվել է տպագրության 18. 11. 2022 թ.:

Ինչպես նշում է Սերգեյ Կարախանյանը (Է. Գյուլնազարյանի քրոջ որդին, ով նույնպես խաչքարագործ է), Է. Գյուլնազարյանի առաջին աշխատանքը նվիրված է եղել իր մոր հիշատակին: Նրա հետագա աշխատանքները ևս կանգնեցվել են որպես վերգերեզմանային կոթողներ (նկ. 1):

Խաչքարերի կանգնեցման հիմնական առիթները

Արցախում ազատագրումից հետո Հայրենական մեծ պատերազմին նվիրված հուշարձանների կողքին սկսեցին հայտնվել խաչքարեր՝ նվիրված Հայրենական պատերազմի, Ցեղասպանության զոհերի հիշատակին, Արցախի ազատագրական և Արցախյան Քառօրյա պատերազմներում զոհվածների և անհետ կորածների հիշատակին, Արցախյան ազատագրական պատերազմում տարած հաղթանակին: Խաչքարեր են կանգնեցվել բազմաթիվ (գրեթե բոլոր) զորամասերում: Խաչքարագործ վարպետ Վարազդատ Համբարձումյանի նախաձեռնությամբ խաչքարերի մի շարք էլ, այսպես կոչված «թուր խաչեր»ե կամ «սահմանային խաչեր», որպես սահմանների սրբազան պաշտպանության խորհրդանշաններ, կանգնեցվեցին Արցախի պաշտպանական գոտիներում:

Խաչքարերի կանգնեցման նախաձեռնությունը

Խաչքարերը, ինչպես կարելի է դատել արձանագրություններից, երբ դրանք նվիրված կոնկրետ անձանց հիշատակին, կանգնեցվում են հիմնականում հանգուցյալի մտերիմների, բարեկամների, հարազատների կողմից: Հուշահամալիրների մաս կազմող խաչքարերի դեպքում նախաձեռնողի դերում կարող էր հանդես գալ համայնքի ղեկավարը կամ այլ պաշտոնյա, սակայն սրանք ևս կարող էին լինել անահատական հովանավորչությամբ: Զորամասերում տեղադրված խաչքարերը հիմնականում Պաշտպանության բանակի նախաձեռնությամբ տեղադրված խաչքարեր են, չնայած հանդիպում են նաև խաչքարեր, որոնք տվյալ զորամասում զոհված զինծառայողների հարազատների կողմից էին տեղադրվում:

Խաչքարերի տեղադրությունը

Խաչքարերը հիմնականում տեղադրվում էին եկեղեցիների, վանքերի շրջակայքում՝ որպես շրջակայքը մշակութայնացնողի և հավատացյալին դեպի սրբությունը առաջնորդողի, բնակելի համալիրների բակերում, մայրուղիներին հարող մայթերին, գլխավոր հրապարակներում, փողոցների խաչմերուկներում, զբոսայգիներում, գերեզմանատներում և զորամասերում:

Խաչքարերի գործառութային նշանակությունը

Խաչքարերի գործառութային նշանակությունն Արցախում կարծեք թե միանշանակ է (հարցազրույցների նյութեր[1]): Զրուցակիցները նշում էին, որ անկախ

1 Հարցազրույցներ են իրականացվել Պատմական միջավայրի պահպանության Հադրութի շրջանային պետական ծառայության պետ Գայանե Բուդաղյանի, Ասկերանի շրջանային պետական ծառայության պետ Ալլա Արզումանյանի, Մարտունու վարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության բաժնի վարիչ Անի Խաչատրյանի,

կանգնեցման առիթից, խաչքարերը անմասն չէին մնում համայնքային միջոցառումներից՝ Արցախի Հանրապետության հռչակման օր՝ սեպտեմբերի 2-ին, Շուշիի ազատագրման և Արցախի բանակի ստեղծման օր՝ մայիսի 9-ին, Հայրենյաց պաշտպանի օր՝ հունվարի 28-ին, Հայոց ցեղասպանության օր՝ ապրիլի 24-ին, եթե դրանք անհատական կոթողներ էին, այցելություններ լինում էին նաև ծննդյան և մահվան օրերին: Վերը նշված օրերին կազմակերպվում էին դպրոցականների այցելություններ, թեմատիկ միջոցառումներ, մաքրման աշխատանքներ և այլն:

Պատկերը այլ է զորամասերի տարածքներում կանգնեցված խաչքարերի դեպքում: Ինչպես ցույց տվեցին զինծառայողների շրջանում անցկացրած հարցումները դրանք հիմնականում ծառայում էին որպես լուսանկարվելու համար հարմար «պատ»: Որոշ զորամասերում խաչքարի կողքին էին կազմակերպվում երդման արարողությունը. «իսկ զորացրման ժամանակ կատարվում ավանդական դարձած լուսանկարը՝ խաչքարի կողքին»:

Խաչքարերի ծավալային և հորինվածքային ձևավորումը

Քանի որ 60-ականներից սկսած խաչքարագործությունը շատ թույլ արտահայտություն է գտել Արցախում՝ պայմանավորված Արցախի և Հայաստանի կապերի բարդություններով, այստեղ հայաստանյան իմաստով լուրջ դպրոց չի կայացել: Ասվածը նախ և առաջ վերաբերում է խաչքարերի տեխնիկական մշակմանը: Արցախի վարպետների աշխատանքները շատ պարզ և համեստ հարդարանք ունեն՝ սաղր քանդակ, հորինվածքի մասնատվածություն, բազմապլանայինության բացակայություն (նկ. 2): Թերևս միակ բացառությունը Ռոբերտ Ասկարյանն է (նկ. 3), ում արվեստը բավականին հագեցված է Արցախի ավանդական խաչքարային մշակույթից վերցված թեմաներով և կերպարներով[2]: Մնացած դեպքերում

ինչպես նաև որոշ համայնքների ներկայացուցիչների հետ: Զորամասերում խաչքարերի գործառութային նշանակությունը հասկանալու համար զրուցել ենք Արցախում զինվորական ծառայությունը անցկացրածների հետ:

2 Խաչքարերի կերտման առաջին դարերում հորինվածքը ստեղծվում էր բուսաերկրաչափական պատկերներով. միայն 12-րդ դարի վերջերից տարածում գտան պատկերաքանդակներով հարդարված խաչքարերը: Այդ պատկերաքանդակները հիմնականում ներկայացնում են քրիստոնեական թեմաներ: 12–13-րդ դարերում Արցախում հաճախ սկսեցին դիմել աշխարհիկ պատկերաքանդակներին: Մանրամասն տես **Պետրոսյան** 2008, 299:

«Արցախը տալով համահայկական դասական խաչքարերի բազմաթիվ օրինակներ, միաժամանակ առանձնանում է մահկանացուներին ներկայացնող տարաբնույթ թեմաներով ու կերպարներով: Ընդորում, մահկանացուներին ներկայացնող խաչքարերը բնորոշ են արցախի ողջ տարածքին, դրանք շատ են հատկապես գյուղական գերեզմանոցներում» (տես **Պետրոսյան**, **Երանյան** 2022, 32): «Այդ պատկերաքանդակները ժողովրդական պատկերացումների մի յուրօրինակ և հարուստ բնագավառ են: Այստեղ հաճախ պատկերվում են ոչ թե սոսկ կերպարներ, այլ թեմաներ կամ տեսարաններ, որոնք սովորաբար ընդհանուր եզր չունեն պաշտոնական քրիստոնեության հետ, չնայած տեղադրված են խաչի հարևանությամբ և ուղեկցվում են վերջին օրվան ուղղված կանոնիկ արձանագրություններով… Այդ պատկերաքանդակներում ներկայացված են կովի, որսի, խնջույքի, արհեստի և զբաղմունքի, «ընտանեկան դիմանկարի», սգի թեմաները: Նման քանդակները, որպես կանոն, տեղադրվում են խաչքարի բուն հորինվածքից դուրս և նրանից ներքև» (Մանրամասն տես **Պետրոսյան** 2014, 100–13: «Աշխարհիկ»

դժվար է խոսել խաչքարային մշակույթի արցախյան ոճի մասին: Խաչքարերի երկրորդ խումբը կազմում են հայաստանյան վարպետների կերտած խաչքարերը, որոնք երևան են բերում խաչքարասալի ծավալային մշակման և զարդանախշերի քանդակման շատ ավելի մեծ բազմազանություն, տարբեր թեմաների և մոտիվների զգալի առատություն (նկ. 4):

Հետաքրքրական է այս խաչքարերի հորինվածքները փորձել հասկանալ նաև Արցախյան ազատագրական պատերազմի տեսանկյունից, քանի որ դրանց հիմնական մասը նվիրված է Արցախյան առաջին պատերազմին: Շատ դեպքերում տեսնում ենք խաչքարերի դասական օրինակների կրկնություն, և եթե չլինի արձանագրությունը, դժվար է գտնել կապը պատերազմի, պաշտպանության կամ հաղթանակի հետ: Միաժամանակ բավականին մեծ տարածում ունեն նաև այն խաչքարերը, որոնց հորիվածքները ներառում են արծիվ, թուր, վահան և դրանց տարաձև համադրություններ: Վարպետները փորձել են դրանց միջոցով հաղթական-պաշտպանական կերպար հաղորդել հորինվածքին և դրանով իսկ այն կապել ազատագրական պատերազմի թեմային: Արծվի կերպարը խաչքարային հորինվածքներում գերիշխող դիրք է ձեռք բերում հատկապես 16–17-րդ դարերում և այն ամենասերտ կապն է ցուցաբերում անմահության և հարության քրիստոնեական խորհրդաբանության հետ (Պետրոսյան 2008, 298): Վարպետների մի մասը, իհարկե, քաջածանոթ լինելով այս ամենին՝ արծիվը ներառել է խաչքարային հորինվածքում, սակայն մյուս մասը կարծես ինքնուրույն է փորձում մեկնաբանել այն. «…Որպես մեր կռված կամ զոհված տղաների հզորությունը և քաջությունը ցուցող[3]»: Վահանը վարպետները մեկնաբանում են այսպես. «Մենք պատերազմ չենք սկսել, մենք պաշտպանել ենք մեր իրավունքները, արդյունքում՝ հաղթել…»: Ինչ վերաբերում է թրին, նկատենք, որ Արցախի ավանդական խաչքարային պատկերաքանդակներում թուրը քիչ է պատկերվել, որպես զենքի հիմնական տեսակ պատկերում էին նիզակը: Սակայն թրի օգտագործումը մեզ շրջապատող բազմաթիվ հուշարձաններում հանգեցրեց նրան, որ որպես «հաղթական զենք» հենց թուրն ընկալվի, և խոսքն այստեղ միայն խաչքարային հորինվածքներում պատկերվող թրի մասին չէ:

Ամենայուրօրինակ դրսևորումը, որը սկզբունքորեն կապված է Արցախի ազատագրական պայքարի հետ, խաչքարային մշակույթում բացառիկ և նոր երևույթն է՝ «թուր-խաչերը» կամ «սահմանային խաչերը» (նկ. 5, 6):

Խաչի՝ որպես ամենահաղթ զենքի և հաղթանակի խորհրդանշանի ընկալման հիմքը նախ և առաջ գալիս է Քրիստոսի փրկագործական խաչելությունից՝ խորհրդանշելով մահվան հանդեպ հաղթանակը, Մկրտության ծեսից, երբ խաչն

կոչվող թեմաները շատ ավելի բազմազան են 17–19-րդ դարերի տապանաքարային պատկերաքանդակներում: Խաչքարային պատկերաքանդակների թեմաների կիրառմանը զուգահեռ շատ ավելի լայն տարածում են գտնում հերկի տեսարանները, զբաղմունքները, արհեստները, խնջույքի տեսարանները և այլն: Եվ ինչպես տապանաքարային պատկերաքանդակն է ընդլայնել խաչքարային պատկերաքանդակի «նեղ» շրջանակները, այնպես էլ Ռ. Ասկարյանն է փորձել ընդլայնել իր կերտած խաչքարերի պատկերագրությունը, ավելի նախընտրելով տապանաքարային պատկերաքանդակների բազմազան և արձակ մոտեցումները: Մանրամասն տես **Սաֆարյան** 2021, 203–216:

3 Սասֆարյան Ա., ԴՆ, հարցազրույց Ս. Ասրյանի հետ, 08.08.2022:

ընկղմելով ջրի մեջ սպանում կամ կապում է վիշապին, մահը և մեղքը, դժոխքի ավերման տեսարանից, Գրիգոր Լուսավորչի և Կոստանդիանոս մեծի տեսիլքներից, վերջապես խաչի՝ հենց թրի հետ ունեցած նմանությունից: Խաչքարային արձանագրությունները ևս խաչը նկարագրում են որպես թշնամիներին հաղթող և աստվածային արյամբ մխված և օծված չբթացող զենք… (Պետրոսյան 2008, 267): Սակայն եթե միջնադարյան վարպետները իրենց արձանագրություններում խաչը որպես հաղթանակի զենք կամ նշան բնութագրելով, խուսափել են խաչին զենքի կամ թրի տեսք տալ, նոր խաչքարերի դեպքում մենք հստակ տեսնում ենք, որ խաչը վեր է ածվել թրի: Սա մի նոր երևույթ է, որը ինչ-որ չափով կարծես շեղում է քրիստոնեական ընդհանուր գաղափարախոսությունից, քանի որ խաչը՝ որը միտված է ապագային, երբեք չի պատկերվել որպես թուր կամ զենք: Այս խաչքարերի օրինակով մենք այսօր կարող ենք խոսել խաչքարերի նոր գործառույթի մասին, որը դասական խաչքարը չի ունեցել:

Թուր-խաչերի հորինվածքում որպես կանոն հանդես է գալիս թուրը, որը կարծես քառաթև թուր լինի, այսինքն մենք չենք տեսնում սովորական թուր, որն ունի դաստակ, հորիզոնական բաժանարար և սայր. վարպետը կարծես փորձել է պատկերել նրա ուժն ու զորությունը բոլոր ուղղություններով: Երկրորդ կարևոր բաղադրիչը վահանն է, ավելի ներքև տեսնում ենք թրի հարվածից առաջացած ճառագայթներ, որոնք պատկերելիս վարպետը ոգեշնչվել է Հակոբ Կոջոյանի «Սասունցի Դավիթ» կտավից: Նման խաչեր կանգնեցվել են Վարանդայում (Ֆիզուլի), Ներքին Ճարտարում, Սպիտակ Շենում, Մարտակերտում, Մատաղիսում, Տոնաշենում (Եղակիր), Ձրականում (Ջաբրայիլ) և այլուր:

Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և հատկապես 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ Արցախի Հանրապետության զգալի տարածքների՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո, այդ տարածքներում գտնվող մշակութային ժառանգության թիրախավորումը Ադրբեջանի կողմից հստակ արտահայտվող քաղաքականություն է: Առավել խոցելի են Արցախյան ազատագրական պատերազմից հետո տեղադրված հուշարձանները, քանի որ Ադրբեջանի նախագահի հայտարարությամբ նրանք չէին պատրաստվում պահպանել «օկուպանտների» կողմից «անօրինաբար» կառուցված մշակութային արժեքները: Ուստի կարիք կա իրականացնել այդ հուշարձանների հավաքագրում, ցուցակագրում և քարտեզագրում: Մեդիա դաշտի մոնիթորինգի միջոցով տեսնում ենք, թե ինչպես են Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում պարբերաբար ոչնչացվում և թիրախավորվում հայկական մշակութային ժառանգության օբյեկտները, այդ թվում նաև ժամանակակից խաչքարերը: Խաչքարերի ոչնչացման և պղծման դեպքերը փաստող տեսանյութեր և լուսանկարներ պարբերաբար հրապարակվում են ադրբեջանցի զինվորների կողմից, բացի այդ, նման հրապարակումների կարելի է հանդիպել նաև պետական, հանրային և իշխանական լրատվամիջոցների կողմից, ինչպես նաև Ադրբեջանի պաշտպանության նախարարության հրապարակած տեսանյութերում:

Որպես եզրակացություն կարող ենք ասել, որ Արցախում ժամանակակից հուշարձանաշինությունը հիմնականում կապված է Արցախյան ազատագրական պատերազմի հետ: Ժամանակակից խաչքարագործությունը նույնպես կարելի է դի-

տարկել Արցախյան երեք պատերազմների համատեքստում, քանի որ և՛ խաչքարերի հավաքագրման, և՛ վարպետների հետ ունեցած զրույցների քննությունը պարզում է, որ ժամանակակից խաչքարագործության մեջ կարելի է առանձնացնել երեք ալիք, որոնք անմիջապես կապված են Արցախյան երեք պատերազմների հետ՝ Արցախյան ազատագրական պատերազմ, Քառօրյա պատերազմ և Արցախյան 44-օրյա պատերազմ:

Խաչքարային մշակույթը նաև մի գործիք է, որի օգնությամբ կարելի է բնութագրել հանրույթի ընդհանրական վիճակը, այն կարծես արտացոլում է հանրույթի իրական կենսընթացը:

Ժամանակակից խաչքարային մշակույթը կարելի է քննարկել արցախյան և հայաստանյան իրավիճակների համատեքստում. Արցախում այն շատ դանդաղ ձևավորվեց, ինչը բնութագրում է Արցախի և Հայաստանի անջատվածությունը, Հայաստանի հետ հաղորդակցվելու ադրբեջանական քաղաքականության արգելքը և ընդհակառակը՝ ազատագրումից հետո մենք տեսնում ենք հորդումը, ինչը կարելի է դիտել մշակույթի տարբեր բնագավառներում: Եվ վերջապես երրորդ փուլը՝ մենք կարող ենք խաչքարային մշակույթի միջոցով տեսնել այն ծանր հարվածը, որ ստացել է արցախահայությունը և հայ հանրույթն ընդհանրապես: Մենք կարող ենք նույնիսկ ենթադրել, որ գուցե երևան գան խաչքարեր, որոնք հեռանալու են թրի և ընդհանրապես ռազմական կերպարից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2005 – Պետրոսյան Հ., Խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը, «Հայոց պատմության հարցեր» հանդես, հ. 6, Երևան, 2005, էջ 195 – 215:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2008 – Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2014 – Պետրոսյան Հ., Հովսեփ Օրբելին և Արցախի խաչքարային պատկերաքանդակի հետազոտության խնդիրը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, թիվ 2 (46), ապրիլ – հունիս, 2014, էջ 100 – 113:

ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԵՐԱՆՅԱՆ 2022 – Պետրոսյան Հ., Երանյան Ն., Արցախի կոթողային մշակույթը, Երևան, 2022:

ՍԱՖԱՐՅԱՆ 2021 – Սաֆարյան Ա., Ավանդույթը և վարպետը. Արցախի արդի խաչքարային մշակույթն ըստ Ռ. Ասկարյանի ստեղծագործությունների, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, թիվ 3 (75), հուլիս – սեպտեմբեր 2021, էջ 203 – 216:

Anush Safaryan

Applicant of the Chair of Cultural Studies of Yerevan State University

anushsafaryan1993@gmail.com

MODERN CROSS-STONE CULTURE OF ARTSAKH

Keywords: Artsakh, khachkar culture, iconography, identity mark, border cross, Shushi, Artsakh wars.

Khachkar, undergoing ideological, iconographic, thematic and substantive changes during its centuries-long existence, continues to be one of the most important symbols of Armenian national identity.

In the 60s of the last century, when the new stage of khachkar-making began in Armenia, it did not gain much popularity in Artsakh, center of Azerbaijan's culture-destroying policy. In fact, if in different regions of Armenia we can talk about khachkars as a serious cultural phenomenon, then in Artsakh we are able to talk about its separate, individual manifestations.

Only after the first Artsakh war, the khachkar became the main symbol of marking and sanctifying the liberated territories, settlements and especially the borders, including corresponding dimensional and iconographic changes.

This report discusses the developments and transformations of the Artsakh khachkar culture, the features of khachkar construction, the process of "khachkarization" of the territories liberated as a result of the first Artsakh war.

Ануш Сафарян

Аспирант кафедры культурологии Ереванского государственного университета

anushsafaryan1993@gmail.com

КУЛЬТУРА СОВРЕМЕННЫХ АРЦАХСКИХ ХАЧКАРОВ

Ключевые слова: Арцах, культура хачкаров, иконопись, опознавательный знак, пограничный крест, Шуши, Арцахских войн.

Хачкары, претерпевшие символические, изобразительные, тематические и содержательные изменения, были и остаются важными символами армянской конфессиональной и национальной идентичности.

В 60-х годах прошлого века, когда в Армении начался новый этап хачкаростроения, хачкарное дело не получило большой популярности в Арцахе, находившемся в центре культуроразрушающей политики Азербайджана. По сути, если в разных регионах Армении можно говорить о хачкарах как о серьезном культурном явлении, то в Арцахе можно говорить об отдельных его проявлениях.

Только после первой Арцахской войны хачкар стал главным символом обозначения и освящения освобожденных территорий, населенных пунктов и особенно границ, включая соответствующие объемные и иконографические изменения.

В докладе рассматриваются развитие и трансформации арцахской хачкарной культуры, особенности хачкаракостроения, процесс хачкаризации территорий, освобожденных в результате первой Арцахской войны.